

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

Գլխվկէնտ, Օհայո

10 Ապրիլ, 1978

Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, Առաջնորդ,
Առաջնորդարան Հայոց Ամերիկայի եւ Քանատայի,
Նիւ Եորկ, Ն.Ե.,

Գեր. Սրբազան Հայր,

Եկեղեցւոյս յարակից Մշակութային-Ընկերային շէնքը որ իր մէջ կը պար-
փակէ սրահ, խոհանոց եւ դասարաններ, եւ որու շինութեան ձեռնարկուած էր
1969-ին եւ բացուած կատարուած 1972-ի գարնան, արդէն իսկ ներկայիս պար-
տագերծ եղած է, իր պարտքը ամբողջութեամբ վճարած ըլլալով այն դրամատան
որմէ փոխառուութիւն կնքուած էր:

Այս յաջողութիւնը անշուշտ գովելի իրականացում մըն է փոքրաթիւ գա-
ղութիւն համար, եւ արժանի հրապարակային տօնախմբութեան: Ըստ այսմ մեր
Ծինութեան Յանձնախումբը, Ծխական Խորհուրդի հաւանութեամբ, կ'ուզէ հրա-
պարակային ձեռնարկով մը պարտամուհաւի կիզումը կատարել եւ պարտքի շի-
ջումը նշել, եկեղեցին պաշտօնապէս պարտագերծ հռչակելով տօնական ուրախ
մթնոլորտի մէջ: Այս նպատակին համար ընտրուած թուականն է Յունիս, 18,
1978: Ծինութեան Յանձնախումբին նպատակն է ուրախութեան սեղան սարքել,
առանց մեծ պաշտօնականութիւն տալու երեկոյթին, եւ ղիւրամատչելի գինով
մը կարելի դարձնել մասնակցութիւնը յատկապէս բոլոր անոնց որոնք իրենց
դերը ունեցոր են այս յաջողութեան մէջ՝ իրենց սիրայօժար նուիրաբերու-
թեամբ եւ գործակցութեամբ:

Անկասկած որ փոքրաթիւ համայնքիս ձեռներեցութեան եւ առտաձեռնու-
թեան մէկ պերճախօս ապացոյցն է արձանագրուած վերջին այս յաջողութիւնը,
երբ նկատի առնենք մանաւանդ այն պարագան որ համեմատաբար կարճ ժամանա-
կի մը մէջ, ընդամենը մօտաւորապէս 14 տարուայ ընթացքին, գաղութս տէր
եղած է ընդարձակ հողամասէ մը (մօտաւորապէս 7 արտավար) եւ նոյն տեղւոյն
վրայ վերանորոգուած բնակարանէ մը զատ նաեւ, նորաշէն եւ հայկական ոճով
ճարտարապետուած զոյգ մը շէնքերու, որոնք են Ս. Գրիգոր Նարեկացի եկեղե-
ցին եւ եկեղեցւոյ յարակից Մշակութային շէնքը: Եկեղեցապատկան այս կալ-
ուածին սեփականատիրութիւնը գաղութիս արժած է մօտ 600 հազար տոլարի հըն-
չիւն դրամ եւ որու ներկայի արժէքը հաւանաբար մէկ միլիոն տոլարի հասնի:

Արդ, շինութեան այս երկրորդ հանգրուանին փակումը առիթ համարելով՝
փափաքելի պիտի ըլլար որ Ձերդ Սրբազնութենէն ստանայինք Օրհնութեան Գիր
մը, ի խնդակցութիւն արձանագրուած յաջողութեան եւ ի քաջալերութիւն կա-
տարուած եկեղեցաշինական աշխատանքին, ընթեռնելու համար վերոյիշեալ ձեռ-
նարկին՝ ի լուր ժողովրդեան:

Հ. Կոչ

Ծանօթ. - Եկեղեցապատկան կալուածին վերաբեր-
եալ վերելի հաշիւը կուզեմ սրբագրել.
ըստ այսմ՝ հողամասը (վեցուկէս արտա-
վար) իր վրայի բնակարանով, եւ յե-
գային շինութեան եկեղեցիով ու սրահով
արժած է 337 հազար տոլար. ի սկիզբն
կայի հաշուով կը գնահատուի մօտաւո-
րապէս 570 հազար տոլար:

Մնամք Խոնարհ Աղօթակից,
Rev. Fr. Diran Papazian
Տ. Տիրան Քհնյ. Փափազեան,
Հովիւ եւ Նախագահ